№ 140 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 28 — 1908 — ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 28 № 140

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի.
Առանձին հատարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
ՏԷԼԷՖՈՆ № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1908 ԹԻՒ ԵՐՐՈՐԴ ՀԻՆԳ ՏՈԿՈՍԱԲԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԱԶԱՏ Է ԴՐԱՄԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՐԿԻՑ ԵՒ ԲԱՑ Է ԹՈՂՆՎՈՒՄ

1908 ԹԻՒ ՅՈՒՆԻՍԻ 19-Ի ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ,

200,000,000

ՐՈՒԲԼՈՒ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ Է

Փոխառութեան օբլիգացիաները բաց են թողնվում 100, 200, 500, 1000 և 5000 բուբլի արժողութեամբ

և բերում են, սկսած 1908 թիւ մարտի 1-ից, 5% տարեկան եկամուտ, որոնք վճարվում են տարեկան երկու անգամ՝ մարտի 1-ին և սեպտեմբերի 1-ին։

Տոկոսների Վճարը Մշտապէս Ազատվում է Դրամական Դրամագլուխներից Վերցվող Եկամուտների Տուրքից։

Ներկայ փոխառութեան բոլոր օբլիգացիաները կը հանդցվեն 45 տարվայ ընթացքում, իւրաքանչիւր տարվայ տիրաժների միջոցով, սակայն 1917 թիւ մարտի 1-ից աւելի վաղ չի կատարվի ցպայմանաժամային հանդցումն ոչ սաստկացրած տիրաժներով, ոչ էլ կոնվէրսիայի կամ յետ գնման միջոցով։

Առաջին տիրաժը, հանդցման պլանի համաձայն, տեղի կունենայ 1909 թիւի նոյեմբերին։

Պայմանաժամային կուպոնների և տիրաժ դուրս եկած օբլիգացիաների վճարումը տեղի կունենայ Պետական բանկում, նրա գրասենեակներում, բաժանմունքներում և գանձատներում։

Տիրաժ չը դուրս եկած օբլիգացիաները կրնդունվեն որպէս գրաւական արքունական կապալների և մատակարարումների համար, նոյնպէս և որպէս ապահովութիւն ակցիզի և մաքսատուրկի յետագայում վճարի այն գներով, որ որոշում է ֆինանսների մինիստրութիւնը։

Վերոյիշեալ փոխառութիւնը իրագործվում է ստորև յիշատակված տասը բանկերի միջոցով հրապարակական ստորագրութեամբ։ Ստորագրութիւնը բացվում է յուլիսի 4-ին ցերեկվայ 10 ժամից մինչև 3 ժամը Պետական բանկում, նրա գրասենեակներում և բաժանմունքներում և Վոլժսկո-Կամսկի Առևտրական, Ս. Պետերբուրգի Միջազգային Առևտրական, Ռուսական արտաքին առևտրի համար, Ս.-Պետերբուրգի գեղջային-փոխառու, Ռուս-Շինական, Մոսկվայի Առևտրական, Ազով Դոնեան Առևտրական, Հիւսիսային, Ռուսական Առևտրա-Արդիւնաբերական, Սիբիրեան Առևտրական բանկերի բաժանմունքներում։

Ստորագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում են նոյնպէս Ս. Պետերբուրգի մասնաւոր, Առևտրական, Մոսկվայի Առևտրական, Մոսկվայի գեղջային բանկերում և բանկային տներում Գ. Վավէլբերգի Վարշավայում և Պետերբուրգում, Ինկէր և Ընկ. Պետերբուրգում ու Մոսկվայում։ Եղբարք Ժամհարեանների Մոսկվայում։ Նշանակվում է 95% անուանական արժողութեան աւելացնելով ընթացիկ տոկոսները տարեկան 5%-ի չափով 1908 թիւի մարտի 1-ից մինչև վճարի օրը։

Իսկական օբլիգացիաները պատրաստելուց առաջ կը տրվեն առանձին ժամանակաւոր վկայականներ, որոնք կունենան կուպոններ 1908 թիւի սեպտեմբերի 1-ի և 1909 թիւի մարտի 1-ի ժամանակամիջոցով և այն հիմնարկութեան շտէմպէլով, որը տուել է վկայականը։ Վերջը այդ վկայականները ձրիաբար կը փոխարինվեն իսկական օբլիգացիաներով 1909 թիւի սեպտեմբերի 1-ի ժամանակամիջոցի և հետեւեալ կուպոններով։ Փոխանակութեան տեղի և ժամանակի մասին տեղի կունենայ առանձին յայտարարութիւն։

Ստորագրվողները իրանց հասանելիք օբլիգացիաները կը ստանան ամեն ժամանակ մաս-մաս կամ լրիւ՝ սկսած 1908 թիւի յուլիսի 12-ից։ Յամենայն դէպս ստորագրվողները կարող են ստանալ ոչ պակաս մի քառորդից 1908 թիւի յուլիսի 12-ի իրանց հասանելիք անուանական դրամագլխի, մի քառորդը ոչ-ուշ 1908 թիւի սեպտեմբերի 1-ից, մի քառորդը ոչ-ուշ 1908 թիւի հոկտեմբերի 15-ից, մի քառորդը ոչ-ուշ 1908 թիւի դեկտեմբերի 1-ից։ Ստորագրվողները, որոնց հասնում են ըստ բաժանման մինչև 1000 բուբլի գումարի օբլիգացիաներ, վճարում են նրանց լրիւ 1908 թիւի յուլիսի 12-ին։՝

Ստորագրութեան Ժամանակ պէտք է Ներկայացվի Գրաւական Պահանջած Օբլիգացիաների Արժողութեան 5%-ի Չափով,

կամ առձեռն դրամով կամ տոկոսաբեր թղթերով, որոնց ստորագրութիւնն ընդունող հիմնարկութիւնն ընդունում է որպէս բաւարար ապահովութիւն։

Այն դէպքում, եթէ պահանջները կը գերակշռեն փոխառութեան ընդհանուր գումարից, տեղի կունենայ միակերպ, հաւասարապէս բաժանումն։ (ու. շ. ե. հ.) (առ.) 4—2

Լ. Լեալէֆիլաբօրաօրիայի Օրլեան քաղաքում (Ֆրանսիա)

Եօդիրին բժշկապետ Դէշանի

(Iodhyrine du d-r Deschamp)

ՇԱՏ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻԶՈՑ

ՀԱՂԱՆԱԼՈՒ ԴԷՄ

որ խորհուրդ են տալիս բժիշկները, փառաւոր հետեւանքներով։ Բժշկապետ Դէշանի Եօդէրինը նշանաւոր միջոց է համարվում չաղութեան դէմ. նրա աջող ներգործութիւնը նկատվում է հէնց բժշկութեան սկզբում։

Բժշկապետ Դէշանի Եօդէրինը բոլորովին անվնաս է օրգանիզմի համար։

Հեռացնում է չաղութիւնը ստիճանաբար շատ կարճ ժամանակամիջոցում։

Արկղիկի գինը, որ պարունակում է 60 դեղհատներ, արժէ 4 ր. 25 կոպ.։

Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային խանութներում։

Ընդհանուր ներկայացուցչութիւնը Ռուսաստանում

Торговый домъ ЛЮКСЕМБУРГЪ и К-о, Варшава, Журавья, 40.

(10, 17, 24, 29) ա. 4—4

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

հրատիրում է այն բոլոր անձերին, որոնք կը ցանկանային իրանց ունեցած գումարները պարտքով տալ (փոխ տալ) քաղաքին, այդ մասին գրաւոր դիմել վարչութեանս և մանրամասնօրէն յայտնել փոխառութեան վերաբերմամբ իրանց բոլոր պայմանները։ Քաղաքին թոյլատրված փոխառութեան գումարը՝ 63,000 բուբլի է։ Քաղաքային վարչութիւնը ընդունում է փոխառութիւններ ոչ պակաս 3000 բուբլուց և երկու տարուց ոչ պակաս ժամանակով։

Փոխառութիւնների տոկոսները կը վճարվեն երկու կողմերի համաձայնութեամբ որոշվելիք ժամանակներին։

Քաղաքի պարտքերը ապահովվում են նրա բոլոր գոյքերով, որոնց արժէքը 3 միլիոն բուբլուց աւելի է։

Յայտարարութիւնները պէտք է ուղղել այս հասցէով. Въ Александропольскую Городскую Управу, Александрополь (Эрив. губ.).

(17, 20, 22, 25, 28) ա. 5—4

ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ

Արդուբեան յոտդասեան օրիորդաց դպրոցի համար

Հարկաւոր է

աւագ-ուսուցիչ բարձրագոյն կամ մանկավարժական կրթութեամբ (ուսուցչական ինստիտուտաւարտ), շաբաթական 14 դաս, տարեկան 1200 բուբ. ռոճիկով։ Խնդիրները վկայագրերով պէտք է ուղարկել մինչև յուլիսի 15-ը այս հասցէով՝ Александрополь, Приходскому попечительству армянской церкви св. Богородицы.

Ս. Աստուածածնի ծխ. հոգաբարձութիւն. (ե. հ. շ.) ա 10—5

ԼԱՅՆ ԸՄԲՌՆՈՒՄ

Վերին աստիճանի խորին ուշադրութեան արժանի է անգլիական գաղթային քաղաքականութեան մի նոր երևոյթը։

Մեր ընթերցողները դեռ չեն մոռացել հարաւ-աֆրիկային պատերազմը, երբ անգլիացիները կռւում էին Ցրանսվալի և Օրանժի հասարակապետականների հետ։

Նախկին թշնամիները ոչ միայն դարձել են խաղաղ ռազմարարներ, այլ և այսօր ջանքեր են գործ դնում միանալու և կազմելու մի մեծ և ուժեղ պետութիւն Հարաւային Աֆրիկայում, Անգլիայի ընդհանուր հովանաւորութեան ներքոյ։

Անգլիան իր ոյժը և գերիշխանութիւնը հիմնում է ոչ թէ գանազան ազգութիւնների և գաղթավայրերի թշնամութեան և հակառակութեան վրա, այլ նրանց միութեան և համերաշխութեան վրա։ Անգլիան այդտեղ հետևում է ոչ թէ «բաժանիր, որ տիրես» բանաձևին, այլ հանրային շահերի պաշտպանութեան գաղափարին։

Դրա մէջ Անգլիան տեսնում է գրաւական Հարաւային Աֆրիկայի բարգաւաճման և Անգլիայի գերիշխանութեան ամրութեան համար։

Ներկայ տարվայ մայիսի 4-ին Կապի, Ցրանսվալի, Օրանժի, Նատալի, Բոդեզիի, այլ և Մաֆրիկի կղզու պատգամաւորները, բրիտանական կուսակալի նախաձեռնութեամբ, կազմեցին համագումար մի ժողով, որտեղ բացարձակ կերպով յայտնվեց հետևեալը.

«Խորհրդակցութիւնը այն կարծիքին է, որ Հարաւային Աֆրիկայի հիմնական շահերի և հաստատուն բարգաւաճման համար կարևոր է, որ փոքրիկ ինքնավարական գաղթավայրերը կարելիին չափ շուտով միանան մի մեծ սահմանադրական մարմնի մէջ՝ ընդհանուր բրիտանական հովանաւորութեան տակ։»

Հարաւային Աֆրիկայի անգլիական կառավարիչ լորդ Սէլբորնը ստացում է բարերար հետևանքներ այդ միութիւնից, հաւատացած լինելով, որ վերջինի բացակայութեան պատճառով այդ մեծ և հարուստ երկիրը մինչև այժմ զրկված է եղել ինքնուրոյն զարգացման հնարաւորութիւնից և ստեղծագործական շինարարութեան պայմաններից։

Շնորհիւ լայն աշխարհահայեացքի, որով անգլիական ազգը նայում է գաղութների և տեղական ինքնավարութիւնների վրա, իւրաքանչիւր գաղթավայր զգում է իրան թէ կատարեալ ազատ իր երկրի մէջ և թէ մասնիկը հզօր բրիտանական պետութեան, որի քաղաքացիներին կապում են ընդհանուր քաղաքացիական ազատութիւնը և ընդհանուր քաղաքակրթական նպատակները։

Այն լայն ըմբռնումը, որով Անգլիան վարում է իր գաղթային քաղաքականութիւնը, ոչ միայն հաշտեցրել է բօէրներին իրանց ներկայ վիճակի հետ, այլ և ոգևորում է նրանց նայելու լի յոյսերով իրանց երկրի ապագայ բարգաւաճման վրա։ Հարաւ-աֆրիկական պատերազմի ժամանակ հրաշակ ստացած գեներալ Բոտան ներկայումս ամենաեռանդուն ձգտողներից մէկն է աջողեցնելու այն միութիւնը, որի մասին մենք խօսում ենք։

Հարաւային Աֆրիկայի գաղութների համախմբումը կը ներկայանայ իբրև խոշոր կուլտուրական միութիւններից մէկը, որը աջող կերպով լուծած կը լինի պետական և քաղաքացիական համերաշխութեան խնդիրները երկրագնդի ընդարձակ շրջաններից մէկում։

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 26 յունիսի

Սալոնիկից ստացված հաղորդագրութիւնների համաձայն, այնտեղ ընդարձակ չափեր է ընդունել երիտասարդ Թիւրքերի ագիտացիան, որի կենտրո-

նը գտնվում է Մոնաստիրում։ Ագիտացիան մուտք է գործել զօրքերի մէջ և Սալոնիկի զինուորական դպրոցը։

Զինուորա - դատական յանձնաժողովը երեք օֆիցէրների դատապարտեց արսորի, մնացած 20 հոգուն, որոնք կասկածվում են ագիտացիայի մէջ, արդարացրեց, հակառակ կօմենդանտի յամառ ցանկութեան, որ աւելի խիստ դատավճիռ էր պահանջում։ Այս պահանջի հետ կապ ունի յունիսի 13-ին կօմենդանտի կեանքի դէմ օֆիցէրի կատարած մահափորձը։ Ատրճանակից ապարդիւն կերպով կրակող օֆիցէրն անյայտացաւ։

Ագիտացիայի աչողութիւնը վերագրում են Հիլմի-փաշայի թուլութեան։ Այդ դժգոհութեան ապացոյց մատնանիշ են անում այն հանգամանքը, որ Մակեդոնիայի երրորդ զօրաբանակի հրամանատար նշանակվեց Իզմայիլ փաշան, որ այդ զօրաբանակի հրամանատար եղած ժամանակ, Հիլմի-փաշայի հետ վատթար յարաբերութիւններ ունենալու պատճառով, ստիպված էր թողնել պաշտօնը և հեռանալ։

(«Հ. Գ.»)

—

Վիէննա, 26 յունիսի

«Cor. Bureau»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ հիւպատոսական հաղորդագրութիւնները հաղորդում են, որ Մոնաստիրում պատերին կպցրել են երիտասարդ Թիւրքերի կազմած կոչը, որով սահմանադրութիւն է պահանջվում։

Տեղումս տարածված սենսացիոն լուրերը, որ իբր Բեսնինի զօրաբանակից օֆիցէրների փախուստը կապ ունի Զէմայի-փաշայի սպանութեան հետ, հիմքից զուրկ են։ Ագրիանապոլսում օֆիցէրների ցոյցի մասին պատող տեղեկութիւնները նոյնպէս չափազանցված են կամ իրականութեանը չեն համապատասխանում։

Զինուորական մինիստրութեան շրջանակներում խօսում են, որ շուտով սուլթանը մի իրադէ կը հրատարակէ Սալոնիկի զինուորական շրջանի բոլոր օֆիցէրներին տեղափոխելու մասին։

(«Հ. Գ.»)

—

Թաւրիզ, 26 յունիսի

Հայի թանգութեան պատճառով մի քանի մզկիթներում, բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ, տեղի է ունենում հակա-կառավարական ագիտացիա։

Զուկաները փակ են։ («Հ. Գ.»)

—

Ուրմիա, 26 յունիսի

Մալանա գիւղում, ուր քանակ է դրել Թիւրքաց Թերգեվերի գունդը, շինվում է զօրանոց 1 ամբողջ բատալիոնի համար և զաւառական վարչութեան շինութիւն։ Հեռագրված է հեռագրաթել սահմանելու Թիւրքական Դիզէ բաղաքի հետ։

Ուրմիայում հանգիստ է։

Սանսանակլիային խառն յանձնաժողովը իր պարապմունքներն սկսեց։

(«Հ. Գ.»)

—

Բերլին, 25 յունիսի

„Köln. Zeitung"-ին Տանժէրից հեռագրում են, որ եթէ Աբդիլ-Ազիզը Ֆրանսիական զօրքերի պաշտպանութեան ներքոյ շարժվի դէպի Մարոկէշ, այն ժամանակ ընդհանուր ապատամբութիւնը վճռված բան է։ («Հ. Գ.»)

—

Սոֆիա, 26 յունիսի

Ներքին գործերի մինիստրը իմանալով, որ տեղումս ապրող յեղափոխականները դրամաշորթութեան փորձեր են արել առևտրականներից, դրամոյց խուզարկութիւններ անել։ Բոլոր կուսակցութիւնների յեղափոխականների միջև տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալութիւններ։ Շատ մակեդոնացիներ արտաքսվեցին գաւառական բաղաքները։ («Հ. Գ.»)

—

Վարշավա, 26 յունիսի

Յունիսի 25-ի երեկոյեան Գրիբնայա կայարանում անցնում էր մի տրէյ երիտասարդ, որը, հաւանօրէն անզգուշաբար, վայր ձգեց իր մօտ եղած ռումբը, որի ուժեղ պայթումից բացի, նրանից ծանր վիրաւորվեցին երեք և թեթև չորս հոգի։

—

Կոլն, 26 յունիսի

Էլէնի վրա կատուցվող հարաւային կամուրջը փլվեցավ, խեղդվեցին 14, լուրջ կերպով վիրաւորվեցին 9 հոգի։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 26 յունիսի

Պետական Դումայի և Խորհրդի տարբաձայնութիւնները բնող համաձայնեցուցիչ յանձնաժողովի նիստում, պետական մաշկի սիստեմով արտակարգ ծախսերի նախահաշիվի վերաբերութեամբ, բնութեան ենթարկվեց ծարքերի նախահաշիվի 432-րդ համարը, որով առաջարկվում է վճարել պետական կան կարճ ժամանակեայ պարտամուրհակները և պետական գանձատան պակասորդ գումարը։ Համաձայնութիւն չը կայացաւ, որովհետև Դումայի և Խորհրդի անդամները մնացին ամեն մէկը իրանց նախկին կարծիքի մէջ։

(«Հ. Գ.»)

—

Իրկուտսկ, 26 յունիսի

Ալէքսանդրովսկի աքսորական բանտից փախչելու և բերդապահ կառավարչին սպանելու համար, զինուորական դատարանը 15 մեղադրեալ-աքսորականներից եօթին դատապարտեց մահվան պատժի, միւսներին արդարացրեց։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 26 յունիսի

«Cor. Bureau»-ին հաղորդում են Կ. Պոլսից, որ մինիստրների խորհուրդը վճռեց ընդարձակ և կտրուկ միջոցներ ձեռք առնել, նկատի առնելով Իսնայում տեղի ունեցող դէպքերը։

Մինչև օրս դատատուութիւն չը դատ այն լուրը, թէ Մոնաստիրի Վիլայէթում սկսել է երիտասարդ թիւրքերի ուժեղ շարժում։ («Հ. Գ.»)

—

Վիէննա, 26 յունիսի

„Fremdenblatt"-ը հաստատում է իտալական լրագիրների տեղեկութիւնը, որ շուտով բարօն Էրենտալը և Տիտտոնին տեսակցվելու են միմեանց հետ։ Տիտտոնին կը հանդիպէ բարօն Էրենտալին Աւստրիայում որսի ժամանակ։

(«Հ. Գ.»)

—

Բէլգրադ, 26 յունիսի

Երկու բաղիկալ կուսակցութիւնների միջև կօմպրոմիս կայացնելու բանակցութիւնները վերջնականապէս անաջողութեան հանդիպեցին։ Գիլիմիրովիչը թագաւորին վերադարձրեց կաբինէտ կազմելու հրամանագիրը։ Թագաւորը ընդունեց յետոյ Պաշիչին և Միլովիչին։ («Հ. Գ.»)

—

Վանից՝ մարտից 14-ից՝ առաջն. փոխանորդը մի նամակ է գրել Կահիրէի հայ եկեղեցու քահանայ Աւետ. Շաղոյեանին և շատ մռայլ գոյներով է նկարագրում տեղական հայերի վիճակը։ Նամակագիրն, ի միջի այլոց, գրում է հետեւեալը. «Մարտ 10-էն յետոյ Վանայ վիճակը շատ աւելի սոսկալի եղած է, շուկան քանի մը շաբաթներէ ի վեր փակուած է, կեանքը դադրած, երթեւեկութիւնք ընդհատուած, վարժարանները փակ, վերջապէս այնպիսի վիճակ մը, որ շատ աւելի յոռի է, քան հռչակաւոր 1896 յունիս 3-ին յաջորդող ժամանակը։ Վանզի գոնէ այն ատեն հացն ալ ժան էր, մինչդեռ այժմ այն ալ չկայ, ցորենի չափը 6 մէջիդ է և աւելի բարձրանալու հակամէտ։ Վերջապէս ինչպէս հասկցնել ձեզ. գրչով անկարելի է. այսչափ իմացէք, որ հս արդէն հիւանդ ի մահէի՝ օրը հարիւր անգամ կանիծեմ այն ժամը և այն օրը, երբ հս այս թշուառ երկիրը ոտք դրի։ Իրաւ, Զէյթունը տեսած էի, ան ալ աղքատ էր. բայց Վանը ուրիշ է. Վանայ թշուառութիւնը ոչ մի տեղ տեսած չեմ։ Ես ստիպի օրէն պիտի հեռանամ հիւանդութեան պատճառաւ, բայց, զուք ուշադրութիւն դարձուցէք ձեր հայրենեաց վրայ. խօսեցէք, գրեցէք և նպաստներ հասցնել ուսէք շուտով, եթէ ոչ՝ աւելի շատ անդարմանելի պիտի լինի ապագան և յետամեաց օգնութիւնք՝ անպատակ։ Եթէ կարելի է, յատուկ հանգանակութիւններ ընել տուէք, ներկայացումներու, թատրոններու և այլ միջոցներով գրամ հասցուցէք շուտով, քանի դեռ ժամանակ կայ։ Խօսեցէք տեղւոյդ բոլոր հայրենակից ազգայիններուն և անոնց գործակցութեամբ ըրէք ինչ որ կարելի է»։

Յիշեալ նամակն ուրիշ է տուել, որ կահիրէում բնակվող վաճառականները մի ժողով գումարեն՝ խորհրդակցելու համար, թէ ինչպէս կարելի է գէթ մասամբ մեղմել իրանց բազմաչարչար ժայր հայրենիքի վիճակը։

ԴԷՊԵՐԸՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Թաւրիզ, 17 յունիսի, առաւօտեան

Անջուրմանականների պարագլուխները գիշերներն ռուսաց հիւպատոսարանում։ Այսօր, ասում են, Բահիմ խանի ձիաւորներից 500 հոգի ուղում են քաղաք մտնել։ Անջուրմանականները դիմադրում են։ Անջուրմանականների տեղի տալը ակներև է։ Պարսիկներից շատերը փոխադրվում են հայոց թաղերը, երկիւղ կրելով Բահիմ խանի ձիաւորների սարսափելիութիւններից։ Միր-հաշիմականները այսօր կողոպտեցին Իշլաթ-ալ-Սուլթանի և Շամս ալ-Ուլամայի տները։ Բասրի-Սալթանայի տունը, եթէ հայոց թաղում չը լիներ, վաղուց կողոպտած կը լինէին։ Այս ըսպէնս լսեցի, որ Դավաչի թաղում կողոպտված է ութ տուն։ Հաստատվում է Էյնը-Դովլէի Թաւրիզ գալը։ Այսօր կամ վաղը Բահիմ խանի ձիաւորներից 1500 հոգի պիտի քաղաք ժամանեն։ Կողոպտուած և կոտրածի առաջն առնելու միակ յոյս մնացել է ռուսաց հիւպատոսարանը, որը, հաւատացած ենք, ամեն ջանքեր գործ կը դնէ՝ Թաւրիզ։ աւելի տխուր տեսարանների թատերաբեմ չը դառնալու համար։ Հայոց թեմական առաջնորդը մի նամակով դիմում է մուշտէիդ Հաջի Միրզա Հասան աղային իր յաւակցութիւնը յայտնելով և իր ծառայութիւնն առաջարկելով հաշտութեան բանակցութիւնների մասին. յուսալի է, որ նամակատարը այսօր կարողանայ ապահով Դավաչի թաղը անցնել ու դառնալ, հրացանաձգութեան առժամեայ դադարի շնորհիւ։ Հայոց առաջնորդի միջնորդութիւնը հաշտութեան ուրիշով շատ լաւ ապաւորութիւն է թողնում թէ հայ և թէ թուրք հայրենակիցների վրա։ Ցուսանք, որ թուրք հոգևորականութիւնն էլ կաշխատի իրովանն օր աւուր բազմացող կողոպուտների առաջն առնել և պատճառ չը դառնալ կոտորածների։ Ողբալի է քաղաքի կացութիւնը. դրութիւնը ջղայնացրել է բոլորին։

Երեկոյեան

Հիւպատոսարանի միջնորդութիւնը դեռ արդիւնք չէ ունեցել։ Հակառակ անջուրմանականների արած զիջումներին, միր-հաշիմականները անդրդուելի են մնում։ Իմամ Ջումայի եղբօր սպանութիւնը կատարեցրել է միր-հաշիմականներին։ Հիւպատոսը ամեն ջանք գործ է դնում հաշտութիւնը ապահովելու համար։ Հայոց առաջնորդի նամակը տեղ հասաւ, սպասվում է պատասխանի։ Լուր հասաւ, որ շրջակայքում ձիաւոր զօրքը կողոպտել է մի քանի գիւղեր։ Մարալան թաղում կողոպտվեցին մի քանի տներ։ Թաղի ազգաբնակութիւնը պատսպարվեց այդ թաղում գտնվող ռուսաց քանկի կառավարչի ընդարձակ բնակարանում։ Պ. կառավարիչը սիրով ընդունեց և կերակրում է մի քանի հարիւր պատսպարեալներին։ Կողոպտվեցին մի քանի խանութներ և Ազի քարվանսարայի մի մասը։ Ռուսահպատակ վաճառականներից մի քանիսը դիմեցին ռուսաց հիւպատոսարան իրանց վաճառանոցների պաշտպանութեան համար, որոնք գտնվում են շուկայում, թաղից շատ հեռու. դժուար թէ պ. հիւպատոսը ներկայ անիշխանութեան ժամին կարողանայ ապահովել ռուսահպատակների վաճառանոցները, որովհետև հիւպատոսարանը տեղս ունի միմիայն 45 կօզակ, որոնք հազիւ կարողանան հայոց թաղը ի պահանջել հարկին պաշտպանել կոտորածներից, ուր գտնվում են հիւպատոսարաններն և եւրոպական գաղութը։ Փոխ-կառավարչապետ Իսթիդար ուլ-Մուլքը գտնվում է հիւպատոսարանում։ Հրաժարված կառավարչապետ Մուխբիր Սալթանէն այսօր ճանապարհվում է Ռուսաստան։ Շրջակայքում գտնվող Բահիմ խանի ձիաւորները դեռ քաղաք չեն մտել։ Անիշխանութիւնը կատարեալ է։ Յեղափոխականները բաւական ընկճված են. իսկական բիւրեղացած պարսկական յեղափոխութիւնը այսուհետև կը սկսի աւելի բեղմնաւորվել։

18 յունիսի, առաւօտեան

Կռիւը վերսկսվեց. հրացանաձգութիւնը բուռն է։ Անջուրմանականների հատուածները ստիպված օրհասական կռիւ են մղում այն հաստոցումով, որ անձնատուր եղած դէպքում փրկութիւն չունեն։ Եթէ շանը ներում հրատարակած լինէր, այսօր անձնատուր կը լինէին և զէնքերը կը յանձնէին։ ապագայի երկիւղը ստիպում է մինչև վերջին շունչ կռուել։ Միր հաշիմականները հետզհետէ աւելի ուժեղանում և դիրքեր են գրաւում։ Վերցրին Ալա-Դաֆուի ժամի դիրքերը և պետական գրօշակ բարձրացրին, որի տակ մանողները համարվում են միապետականներ և ազատ են պատժից։ Խիավանի մեծ թաղը կողոպտվում է։ Հայերի թաղը ապաստանողների թիւը հետզհետէ աւելանում է։

Երեկոյեան

Հրացանաձգութիւնը դադարել է։ Այսօրվայ կռիւը մինչև օրս եղածներից ամենակատաղին էր։ Միր-հաշիմականները «իսլամիէ» և պետական դրօշակներ պարզած զրոհ տուին անջուրմանականների մնացորդ դիրքերի վրա. վերջինները զրաւելուց յետոյ ամբոխը ցանկացել էր կողոպտել Շեշկիլանի խանութները։ Ջիաւորների զօրապետ Սուլջայի Նիզամը, որը ներկայում ղեկավարում է միր-հաշիմականների բանակը, մի ճառով կարողացել է կանգնեցնել ամբոխի մտադրութիւնը, շեշտելով որ խանութներից շատերը պատկանում են օտարերկրացիների։ Անձնատուր եղած տներում կախված է սպիտակ դրօշակ։ Մեծ կողոպուտ է եղել Խիավանում, ուր կողոպտված են համարեա բոլոր խանութները։ Մարալան թաղի կողոպուտի առաջն առել է ռուսաց քանկի կառավարիչ պ. Վիսուլիվիչը, որը բանակցել է կողոպտող ձիաւոր զօրքի պետ Բօիւք խանի հետ և թաղի կողմից հատուցանութիւն է տուել Բօիւք խանի պահանջին, որին (իր ասելով) հրաժարված է շահի կառավարութիւնից խաղաղեցնել երկիրը և զինաթափ անել ժողովրդին։ Մարալանի թաղեցիք յանձնել են 55 հրացան։ Կառավարչի բնակարանի մեծ այգին լցված է մօտաւորապէս 2000 հոգով։ Հայոց թաղերում օտարահպատակ հասատատութիւնների և տների վրա բարձրացված են դրօշակներ, մեր կարծիքով բոլորովին անտեղի՝ որովհետև օտարերկրացիների դէմ ոչ մի տրամադրութիւն նկատելի չէ։ Ռուսաց հիւպատոսի միջնորդութիւնը և ջանքերը ապարդիւն անցան։ Անջուրմանականների մի մասը Սաթթար խանի զեկավարութեամբ հրաւիրվում է կռուի։ լսելի է հրաւէրի՝ փողի ձայնը։ Ասում են, որ 600 հոգի շահսևան ձիաւորներ գալիս են անջուրմանականներին օգնութեան։ այս լուրը անհաւատալի է թւում մեզ։ Սաթթար խանը, պատելով փոքրացնելը, հաւաքել է տուել բաւական սպիտակ դրօշակներ, յայտարարելով որ անձնատրութիւն չը կայ, քանի որ կռիւը չէ վերջացել։

Ռուսաց խճուղու հիւանդանոցի վրա պաշտօնեաները բարձրացրած են եղել ռուսաց և մի հատ էլ սպիտակ դրօշակ։ Սաթթարը այդտեղից անցնելիս ուզել է գնդակահարել սպիտակ դրօշակը. անցորդները զգուշացրել են, հասկացնելով ռուսական հատատութիւն լինելը։ Հիւանդանոցի ֆելդշերը յայտնում է հիւպատոսին եղելութեան մասին։ Հիւպատոսը կօզակներով և իր ամբողջ սվիտայով անցաւ հայոց թաղերով, գնաց հիւանդանոց, վերցնել տուեց սպիտակ դրօշակը, որը բոլորովին անտեղի բարձրացված էր հիւանդանոցի վարչութիւնից անգիտակցօրէն։ Հիւպատոսը ձերբակալեց ճանապարհին մի քանի կասկածելի անձնաւորութիւնների։ Հիւպատոսի այս շրջագայութիւնը արտաքնեց թաղերի հասարակութեան, որոնց ապահովութեան և պաշտպանութեան միակ յոյսը մնացել է սպիտակ արծաթի հիւպատոսութիւնը, որի շնորհիւ՝ կարելի է ասել՝ ժողովրդի ընչաքաղցութեան սահման է դրվում։

19 յունիսի

Օրը խաղաղ լուսացաւ։ Երկօրեայ փոթորկալից եղանակն անցած խաղաղվել է։ Հրացանաձգութիւն չը կայ, զինված մարդիկ մեր թաղերում չեն երևում։ Կարծէք խաղաղութեան քօղի տակ ինչ-որ դաւեր են նիւթվում։ Այսօր մի խումբ ձօլաներ գտնվում են թիւրքաց հիւպատոսարանում։ Ինչո՞ւ—դեռ յայտնի չէ։ Երկվայ ձերբակալված երեք պարսիկները բանտարկված են ռուսաց հիւպատոսարանում. դրանց մէջ է յայտնի Աբաս Ալին, որը մի քանի ամիս առաջ հայ թաղերում ընդհարումներ էր ուզում առաջ բերել։ Ներկայ հանգամանքներում դրա ձերբակալելը մեծ աջողութիւն կարելի է համարել, որի համար թէ հայ և թէ թուրք ազգաբնակութիւնը պարտաւոր է խորին շնորհակալութիւն յայտնել հիւպատոս պ. Պախիտովին, իր արթուն հսկողութեան համար։ Այդպիսի սրիկաների մի փոքրիկ ցանկութիւնը կարող է մեծ գժտութիւնների առիթ դառնալ, նամանաւանդ ներկայ էլեքտրականացած վայրկեաններում, երբ ամեն մի գիտակից անձ աշխատում է զգոյշ լինել, արհաւիրքներ ստեղծելու առիթներ չը տալ։ իսկ Աբաս Ալիների համար առիթներ ստեղծելը շատ հեշտ է, որոնց, ինչպէս յիշեցի, ակամայ լինելու դժբաղդութիւն ունեցանք հայերս ամիսներ առաջ։

Այսօրվայ խաղաղութիւնը ժեղ կասկածանքի է ենթարկում աւելի այն պատճառով, որ հայ թաղեր փոխագրվող թուրքերը շատանում են և օտարաստատակների անների վրա սկսում է դրօշակների ծածանումը ստուերանալ։ Ոմանց ասելով անջուրմանականները սպասում են դրսի այժերի, որից յետոյ կռիւը պիտի նորոգվի աւելի գոռ, աւելի ահալի։ Ապարդիւն արիւնդեղութիւն, որից ոչ մի օգուտ չը կայ այլևս։ Զգալի է կառավարչապետի պակասութիւնը։ Շրջակայ գիւղերը թալանվում են։ Սպանվածների ճիշտ թիւը հնարաւոր չեղաւ իմանալ։

Ըստ ոմանց՝ Խիավան թաղը կողոպուտի ենթարկվող անձնատուր լինելուց յետոյ է գլխաւոր պատճառներից մէկը, որը կասեցնում է միւս թաղերին հետզհետէ անձնատուր լինել։ Պակաս դեր չէ խաղում և Սաթթար խանի սպառնալիքը, որը երդուել է ցվերջին շունչ կռուել հակառակ իր բարեկամների թախանձանքին որոնք համոզում են կամ զէնքը ցած դնել, կամ հեռանալ քաղաքից։

Աւելանալի դրութեան մէջ են գտնվում և մի խումբ յեղափոխականներ, որոնք համոզված են, որ կռիւը արդիւնք չունի, այստեղ անձնատուր լինել և մեռնելը անհնար է, Կովկաս կամ այլուր անցնելու որոշումը կենտրոնական բիւրոյից կախում ունի, որը հեռուից գուցէ դժուարանայ նպաստաւոր որոշում կայացնել։ Այս բոլոր անաջողութիւններով հանդերձ, պիտի խոստովանել, որ յաղթութիւնը էլի պարսկական ժանուկ յեղափոխութեան կողմն է, որի կարճ ժամանակվայ գործունէութիւնը այնպէս ցնցեց Պարսկաստանը և այնպիսի բեղմնաւոր հող պատրաստեց ապագայի համար, որ այլևս նա չի մեռնի և գիտակից ու իսկական այժերի շնորհիւ՝ մի օր այնպիսի ծաւալ կը ստանայ, որի ազատատենչ ալիքներին այլև չեն դիմանայ բռնակալական պատնէշները։

Իրօ

ԱՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՎԱՆԻ ՎԻԼԱՅԷԹՈՒՄ *)

—

Թշդանօթաձիգ զօրքը կանգնած է հրապարակում Թշդանօթների բերանները ուղղած հայոց թաղի վրա։ Ամեն ինչ մեռած է քաղաքի այդ մասում, վախենալով ՀԷրեալ փողոցում։ Իշխանութիւնները սպառնում են ոչնչացնել ամբողջ թաղը, եթէ հայերը չը յանձնեն զէնքերը և կօմիտաչիներին, այսինքն յեղափոխական-ֆէդայիներին։ Իսկ եթէ ուշադրութեան առնենք այն, որ միայն մի շաբաթ առաջ կատարած մանրակրկիտ խուզարկութեան ժամանակ վերցրել են հին դանակներն անգամ, այն ժամանակ պարզ գաղափար կարող էք կազմել բնակիչների դրութեան մասին։ Նրանք կատարելապէս ոչինչ չունեն տալու, իսկ չը կատարել հրամանը՝ կը նշանակէ սպանված լինել։ Մեծ ջանքերով աջողվեց հասցնել ի գիտութիւն եւրոպական հիւպատոսների հայերի կրիտիքական, աւելի ճիշտ ասած՝ յուսահատ դրութեան մասին, խնդրելով հեռագրել Կ. Պոլիս։ Անգլիական հիւպատոսը անյապաղ գնաց նահանգապետի մօտ և յայտնեց, որ եթէ չը հեռացնեն զինուորներին, նա կը հեռագրի իր դեսպանութեանը ուրիշ հիւպատոսների հետ միասին։ Նահանգապետն ևս, իր հերթին, խնդրեց չը խառնվել իր գործում, որովհետև ինքը կատարում է քաղաքի կառավարչի պաշտօնը։ Անգլիական հիւպատոսը, բացի հեռագրից, մի յատուկ սուրհանդակ ուղարկեց մայրաքաղաք, մանրամասն նկարագրելով ամեն ինչ։ Եւ հէնց այդ օրը տեղի ունեցաւ մի հետաքրքրական դէպք։ Կէսօրին հրապարակի վրա երևացին քիւրդեր և սկսեցին անկարգ կերպով կրակել և դիտմամբ թէ պատահաբար սպանեցին երեք զինուորների, վիրաւորեցին մի օֆիցէրի։ Այդտեղ այնպիսի մի պատժութիւն սկսվեց, որը, երևի, երբէք չի մոռացվի։ Զինուորների և քիւրդերի միջև սկսվեց մի կատարեալ պատերազմ և յեղափոխականները, որոնց մասին իշխանութիւնները այնպէս անհանգստանում էին, դուրս թռան ոչ թէ հայոց, այլ թիւրքաց թաղից։ Կրակելով և ռումբեր գցելով, նրանք յարձակվեցին զինուորների վրա, այնպէս որ հաւատակիցներին ջնջելու մէջ ամենահանդուն մասնակցութիւն ընդունեց յայտնի քիւրդ աւազակ Սաֆար-աղան։ Նա անսպասելի կերպով անցաւ հայերի կողմը և մտնում էր հէնց կռւի խորքը։ Փիղկական անագին ոյժի հետ և նոյնպիսի հասակ ունենալով, նա մի անգամից սարսափ տարածեց և ստիպեց զինուորներին ցնցվել։ Նրա երևան գալը ֆէդայիների հետ միասին՝ ապշեցրեց մինչև անգամ ընկերներին, որոնք անգիտակցաբար սկսեցին օգնել նրան։ Խառնափնթորելով թշդանօթաձիգ զօրքը, նա նոյնպիսի թափով յարձակում գործեց և հետևակ զօրքի վրա, կատարելապէս արհամարհելով վտանգը։ Երկար եաթաղանով հարուածելով աջ ու ձախ, աւազակը նոյնպիսի ջարդ տուեց և կ սնօնաւոր զօրքերին, որոնք սարսափահար փախան, իսկ ժողովուրդը կեցցէներ էր աղաղակում նրան։ Դա մի տարօրինակ բան էր և կարծես յիշեցնում էր հին դարերը։ Ամբողջապէս արիւնաներկ Սաֆար-աղան հալածում էր զինուորներին, որոնք ենթարկվելով ընդհանուր սարսափին՝ փախան, կուի դաշտում թողնելով իրանց ընկերների դիակները։ Այդ կռուում սպանվեցին շատ օֆիցէրներ և իշխանութիւնները ստիպվեցին աւելի եռանդուն միջոցներ ձեռք առնել։ Անյապաղ հանդէս եկան զրադունները, որոնք հրաման ունէին բռնել արդէն ոչ թէ յեղափոխականներին, այլ քիւրդերին և գլխաւորապէս Սաֆար աղային։ Մինչդեռ նա իր ընկերներով և մի քանի յեղափոխականներ միասին ապաստանեցին մի քարաշէն տան մէջ մոկիթի մօտ և պատրաստվեցին թանդ ծախել իրանց կեանքը։

Ապա շարունակվում է յայտնի բնաւորութեան դէպքը, զինուորները յարձակում են գործում, պաշարվածները ռումբեր են գցում և այդպէս անվերջ։ Վերջապէս վճռվեց վերցնել գրոհ տալով։ Բարրիկադները կանգնեցրին, բերեցին սանդուղքներ, և սկսվեց պաշարումը։ Երևում է, որ յեղափոխականները բաւարար ռազմամթերք էին բերել, որովհետև կրակում էին հատարեա անընդհատ աւերումն գործելով զօրքի շարքերում։ Մինչդեռ Սաֆար աղան իր ժամանակը ի դուր չէր կորցնում և նրա իւրաքանչիւր 2 շտակի կրակոցը ապատում կամ մահացու կերպով վիրաւորում էր զինուորներին։ Այդպէս շարունակվեց մինչև երեկոյ։ Դիւրա կորցրած իշխանութիւնները որոշեցին ոմբակոծել տունը և առաջին ռումբը տան վրա ընկելու փոխարէն ընկաւ սվկիթի վրա, քանդելով մինարէթը։ Մզկիթից դուրս փախան ժողովուրդը և մի քանի ֆանատիկոս մարդիկ և, բանալով իրանց կուրծքերը, կանգնեցին հրացանների կրակոցների առաջ։ Ստիպված եղան դադարեցնել ոմբակոծութիւնը։ Մինչև որ իշխանութիւնները մտածում էին, թէ ինչպէս բռնեն ապստամբվածներին, վերջինները, օգտվելով ժամանակաւոր խաղաղութիւնից, դուրս փախան տնից և յարձակվեցին զինուորների վրա։ Դժուար է երևակայել, թէ ինչ տեղի ունեցաւ դրանից յետոյ։ Ամեն ինչ խառնվեց իրար, զինուորները սկսեցին անկարգ կերպով կրակել և շատ վնաս հասցրին իւրայիններին։ Յեղափոխականների սեծամանութիւնը կարողացաւ փախչել, բայց Սաֆար-աղան, երևում է որ, չէր ուզում ազատել իրան։ Հազիւ կենդանի՝ վերջապէս նրան բռնեցին այն ժամանակ, երբ նա արդէն կոտրել էր քսանից աւելի զինուորներ, որոնց թւում վեց օֆիցէր։ Զգուշութեամբ տարան նրան հիւանդանոց, որովհետև իշխանութիւնները ուզում էին խ-

*) Այս յօդուածը արտատպում ենք «Տիֆ. Лист.» թերթից, պատասխանատուութիւնը ճշտութեան մասին նրա վրա թողնելով։ Խմբ.

ժանալ թէ ինչու էր նա օգնում գեաւուրներին։

Ուշ գիշեր հիւանդանոց եկան իշխանութիւնները քննութիւն կատարելու։ Աւազակը մեռնում էր։ Պղտոր աչքերով իր հայեացքը գցելով ներկայ եղողների վրա, նա դերկար լռում էր և, վերջապէս, դժուարութեամբ արտաբերելով բառերը, արտասանեց մի նշանաւոր ճառ. «Կեանքումս ես սպանել եմ մօտ երեք հարիւր քրիստոնեայ և նոյնքան էլ բռնաբարել եմ։ Ինձ ոչ ոք չէր հալածում։ Դա ինձ զարմացնում էր։ Ինչու է այդպէս. և անա թ կամեցայ փորձել, թէ արդեօք այդպէս կը լինի, եթէ ես սկսեմ մահմեդականներին կոտորել. որոնք վաղուց այն աշխարհը պէտք է գնային իրանց յանցանքների համար։ Ես չը սխալվեցի։ Ինձ սկսեցին որսալ, և անա ես այն ժամանակ հասկացայ իմ կեանքի սարսափը և ես կամեցայ քրիստոնեաներին տալ այն, ինչ որ ես նրանցից վերցրի, բայց կարծեմ չը կարողացայ վճարել նրանց, որպէս պատշաճ է ազնիւ մարդուն, որովհետև սպանեցի շատ քչերին։ Անիծվէք դուք, որ սովորեցրիք ինձ չը ճանաչել մարդային օրէնքները։ Անիծեալ լինէք դուք, դահիճներ»։ Եւ աւազակը ցնցվեց և ուշաթափ եղաւ։ Ներկայ եղողները այնպէս ապշել էին մեռնողի խօսքերից, որ մինչև անգամ չէին փորձում կանգնեցնել նրան։ Գիշերը, աւելի ճիշտը՝ հետևեալ օրվայ առաւօտեան նա վախճանվեց սարսափելի տանջանքներով։ Այժմ իշխանութիւնները վախենում են քիւրդերի վրէժխնդրութիւնից, որոնք պահանջեցին նրա դիակը։ Ամենքն էլ լսեցին, թէ ինչպէս նրանք երդվեցին Մաքարի անունով՝ նրա վրէժը լուծել որպէս հարկն է։ Եւ քանի որ իշխանութիւնները զբաղված էին իրանց մեռնող հաւատակցով, յեղափոխականները կարողացան վերջնականապէս փախչել։ Ազգաբնակութիւնը, ի բաց չառնելով մահմեդականներին, մեծ երկիւղի մէջ է, սպասելով նոր Քշուառութիւններ։

Կ. Պոլսից շտապով ուղարկվում է մի յանձնաժողով այդ գործը քննելու համար։ Հրամայված է Վանի վիլայէթին մօտ կանգնած զօրքերին՝ շարժվել դէպի քաղաք։ Իշխանութիւնները սպասում են, որ քիւրդերը կը կատարեն իրանց սպառնալիքը, իսկ միւս կողմից յեղափոխականները շարունակում են սպառնալ նոր ապստամբութեամբ, որի մասին նահանգապետը ծանուցում է ստացել։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

—

Նիստ յունիսի 26-ի

Նիստը բացվում է ժամը 2 և 8 րոպէին։ Նախագահում է իշխ. Վօլկոնսկին։

Կարդացվում է 1909 թ. բիւջէն քննելու համար ընտրված բիւջէտային մասնաժողովի անդամների կազմը. Աշէմեան, Ալէքսէեվ, Ալէքսէէնկո, հ. Ալէքսանդրօվսկի, Անդէպ, Բայբուրին, Բալակէվ, Բերեզովսկի Զ-րդ, Բիչ, Բօբեանսկի, Բօգդանով, Բօտկին, Բուրլակով, Բէլօուսով, Վեսէլինին, Գոյկով 2 րդ, հ. Գանժուլէվիչ, հ. Գեպեցկի, Գերցէնվիչ, Գօղնէվ, Գոլօբով, Գրաբսկի, Գուչկով, Դղիւբինսկի, Երօպկին, Կրիվցով, Կովալէնկո 1-ին, Զվենիգիցէվ, Իվանով 1-ին, Կապուստին, Կիրեակով, Կիւէզէվ, Կօվալէվսկի, Կրիլով, Լաղովերսկի, Լերեմ, Լուկալէվիչ, Լուչինսկի, Մարկով 1-ին, Մաշկեվիչ, Միկլեայէվ, Մենշիկով, Մերիկով, Նովիկով, Նեկրասով, Ոսոչինին, Պոկրովսկի 2-րդ, հ. Պոգօլսկի, Պոպով, Կրիւդներ-Սարուվէ, Ժուկովսկի, Քոլլին, Պրոցէնկо, Բօգանով, Սաֆէյ, Սանպանով, Սվէնցկի, Տիշչենկо, Տրմաշկին, Ֆէօդորով, Կրուպենսկի, Զէլենով, Զերվինսկի, Շեյդեման, Շինգարէվ և Էրդարդ։

Խմբագրական մասնաժողովի զեկուցման հոսանքն, ընդունվում և քանէվում են Պետական Խորհրդին 31 օրինագծեր, որոնց ընդունել է Դուման առաջին և երկրորդ քննութեամբ վերջին օրերս։

Հաստատ առանց վիճաբանութեան առաջին և երկրորդ քննութեամբ ընդունվում են հետևեալ օրինագծերը.

1) Մի քանի գիւղատնտեսական ընկերութիւններին նպաստներ տալու մասին.

2) Երկրագործութեան գլխաւոր վարչութեան ձեռնարկութիւնների համար գումարներ յատկացնելու մասին.

3) Արքունական հողերի ամարանոցների և մշակելի տեղերի բարեկարգման համար գրաստներ յատկացնելու մասին.

4) Գիւղատնտեսական պէտքերի համար մի քանի գիւղատնտեսական ընկերութիւններին նպաստ տալու մասին։

Նաև առանց վիճաբանութեան ընդունվում են Նոր-Արաքս գետի վրա շինվելիք գրաւիտատոր (ջրարգել) կառուցանելու աշխատանքի համար սիրոցներ բաց թողնելու և մի ելիւրատիվ վարկի շրջանառութիւնները վերատրելու վարչական ծախքերի համար գրաստական գումարներ յատկացնելու օրինագծերը։

Կապուստինը զեկուցանում է կալեթատնտեսական Թանկարանը վերանորոգելու օրինագիծը։ Օրինագիծը քննել երկու մասնաժողովները—ժողովրդական կրթութեան և բիւջէտային։ Ժող. կրթ. մասնաժողովը օրինագիծը պաշտպանում է ամբողջովին, իսկ բիւջէտայինը, համաձայնվելով Թանկարանի գլխաւորագոյն բաժինները լցուցանելու և կարգի բերելու համար գումարներ յատկացնելու հետ, չէ համաձայնում սակայն աւելացնել Թանկարանի ծառայողների թիւը, համարելով այդ աւելացումը այնքան էլ ոչ հիմնական։

Մաքերի պարզաբանութիւնից յետոյ բիւջէտային մասնաժողովի եզրակացութիւնն ընդունվում է։

Կիրեակովը զեկուցանում է 1908 և 1909 թ-երի գինեգործութեանը և այգեգործութեանը նպաստելու համար 97,000-ական ր. յատկացնելու օրինագծի մասին։

Օրինագիծն ընդունվում է։

Սուվչինսկին զեկուցանում է գաղութներ պատրաստող մարմինների և ժամանակաւոր կուսակցութիւնների պաշտօնեաների ուսմիկները և կազմը պահպանելու օրինագիծը։

Օրինագիծն ընդունվում է։

Նաև ընդունվում է այն օրինագիծը, որով 1908 թ. 20,000 ր. է յատկացվում ատորին կարգի արհեստաւորաց դպրոցներ հաստատելու, հանրակրթական դպրոցներում արհեստակցական գիտութիւնների դասընթացքներ կազմակերպելու, ինչպէս և ձեռքի աշխատանքի դասեր մտցնելու համար։

Առանց վիճաբանութիւնների, Բերեզովսկու զեկուցման համեմատ, ընդունվում է այն օրինագիծը, որով 1908 թ. իգական գիմնազիաների և պրոգիմնազիաների նպաստը աւելացնելու համար յատկացվում է 100,000 ր., իսկ սկսած 1909 թուից 200,000 ր., սահմանելով ամենամեայ չափը, ինչպէս միանուագ, այնպէս և հերթական գիմնազիաների համար մօտ 400,000 ր. և պրոգիմնազիաների համար մօտ 200,000 ր.։

Կովալեվսկու զեկուցման համաձայն, առանց վիճաբանութիւնների ընդունվում են.—միջոցներ յատկացնել արական գիմնազիաների պահպանութեան համար Թիֆլիսում (Կուկիայում), Արմաւիրում, Սօչիում, Եկատերինոդարում և 15 թրքուհի Թոշակաւորներ պահելու ս. Նինայի օրիորդաց դպրոցում՝ Բագուում և Երևանում։

Ալէքսինսկին զեկուցանում է այն հետեւանքների մասին, որ ստացվեցին համաձայնեցուցիչ յանձնաժողովի աշխատանքներից այն տարաձայնութիւնները վերացնելու նկատմամբ, որոնք ծագեցին Դումայի և Խորհրդի միջև 163 միլիոն ռուբլի կարճաժամանակեայ պարտաւորութիւններ բաց թողնելու հարցի վերաբերութեամբ։

Համաձայնեցուցիչ յանձնաժողովին չաջողվեց համաձայնութիւն կայացնել։ Դումայի անդամները համաձայն են, որ այդ 163 միլիոնը գործադրվի պետական նախահաշիվով, իսկ Խորհրդի անդամները, ընդհակառակը, դէմ են այդ գումարը նախահաշիվով անցկացնելուն։

Այս խնդրի շուրջը կրկին ծագում են երկար վիճաբանութիւններ։

Վերջ ի վերջոյ Դուման, ձայների մեծամասնութեամբ, ընդդէմ աջակողմեանների և չափաւոր աջակողմեանների, որոշում է նախահաշիվով անցկացնել 163 միլիոն ր.։

Ապա ընդունվում են մի շարք օրինագծեր։

(«Հ. Գ.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ «Մշակի» հետևեալ համարը, Լուսաւորչի տօնի պատճառով, վաղը, կիրակի, լոյս չի տեսնի։

◆ Թիֆլիսի նահանգապետը կովկասեան գլխաւոր իշխանութեան առաջ միջնորդութիւն է յարուցել, որպէս զի նահանգի ռազմական պահնորդախմբի կազմը ուժեղացվի։ Ներկայումս այդ պահնորդախումբը բաղկանում է 700 պահակներից։

◆ Կօջորի խնդրոյ վրա աւտօմոբիլի հետ պատահած դժբաղդ դէպքի քննութիւնը յանձնված է նահանգական ինժեներ Անտոնովին։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութեան կարգադրութեամբ ճանապարհներ տանող բոլոր աւտոմոբիլները մեկնելուց առաջ պէտք է մանրազնին կերպով քննվեն տեխնիկների ձեռքով։

◆ Յունիսի 26-ին, Թամաշինների քաղաքանապարհում, տպրանքատար «Լոսխա» ընկերութեան պահեստում քաղաքային ատենապետական բժշկական մարմինը երևան է հանել կեղծ ալիւր։ Ալիւրը գրաված է, իսկ նմուշը ուղարկված է քաղաքային լաբորատորիան հետազօտելու համար։

◆ Յունիսի 25 ին կայացաւ գումարական ֆինանսական և իրաւաբանական մասնաժողովների միացեալ նիստը, մասնակցութեամբ քաղաքային իրաւախնամների։ Քննութեան խնդիրն էր Գր. Իվ. Միրզոյեվի Թողած ժառանգութեան խնդիրը, որի տակոսներով քաղաքը 90 թոշակաւորներ է պահում նրա անունով բարձրագոյն դպրոցներում։ Միացեալ մասնաժողովը քննելով հանգուցեալի կտակակատարուհու 6 տարիների հաշիւները, գտաւ նրանց ոչ լրիւ և որոշեց պահանջել նրանից մասնաւոր հաշիւ ներկայացնել իրաւաբանչիւր տարվայ համար առանձին առանձին։

◆ Երէկ, յունիսի 27-ին, Թիֆլիսի էլեքտրաքարշի վրա հակող մասնաժողովը, մասնակցութեամբ վարչութեան անդամ պ. Մախեսանի և քաղաքային գլխ. ինժեներ Կօգնօվիցկու գիտեց էլեքտրաքարշի վագոնները, որոնցից մի քանիսը ներկայումս վերանորոգութեան մէջ են։ Էլեքտրաքարշի վարչութիւնը մասնաժողովին հաւաստիացում է տուել, որ շուտով Բէլգիայից կը ստացվին նոր վագոններ։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Ախալցխայի հայ դրամատիկ արուեստի հայ սիրողների ընկերութեան կանոնադրութիւնը։ Ընկերութեան նպատակն է էստետիքական և մտաւոր զարգացում տալ Ախալցխայի ազգաբնակութեանը։ Ընկերութեան մերձաւոր նպատակն է Ախալցխայում սեփական թատրոն կառուցանելը, որ կը նստէ մօտ 6000 ռուբլի, որի համար կազմակերպված է մի թատրոնական յանձնաժողով։

◆ Թիֆլիսի նահանգական ատեանը հաստատել է կովկասեան դեղագործների ընկերութեան կանոնադրութիւնը։

◆ Կուբանի շրջանի կառավարիչը Կովկասի Փոխարքային ներկայացրել է Եկատերինոդարի քաղաքային դումայի միջնորդութիւնը այն մասին, որ Եկատերինոդար քաղաքին թոյլատրվի երեք միլիոնի փոխառութիւն կնքել քաղաքային անյետաձգելի կարիքներին բաւարարութիւն տալու համար։

◆ Թիֆլիսում վերջին ժամանակներս նկատվում է ուժեղ տենդենցիա, մանաւանդ հեռաւոր քաղաքամասերում, զանազան շինարարական ընկերակցութիւններ հաստատելու։ Այդ ընկերակցութիւնները կազմակերպվում են կամ ակցիոներական հիմունքների վրա, ինչպէս այդ գոյութիւն ունի Պետերբուրգում, Բերլինում և Հոլլանդիայում, կամ կոօպերատիվ սկզբունքներով։ Նաեթլուղիները առանձին գաղութավայր հիմնելու նպատակով ընտրել են ընկերակցութեան վերջին տեսակը—կոօպերատիվ հիմունքների վրա։ Այդպիսի ընկերութիւն այժմ կազմակերպում են քաղաքային ինքնավարութեան ծառայողները։

◆ Յունիսի 25-ին Հալաբարում կայացաւ կլուբ հիմնելու խնդիրը քննող մասնաժողովի նիստը։ Քննվեց և ընդունվեց յատուկ մասնախմբի կազմած կանոնադրութեան նախագիծը, որը կը ներկայացվի նահանգապետի հաստատութեան։

◆ Երևանից հաղորդում են, որ գարու բերքը նահանգի ամեն տեղում առատ է։ Նաև շատ լաւ են միւս հացահատիկների, բամբակի և մանաւանդ խաղողի բերքերը։ Եթէ նահանգի գլխին բնութեան որևէ աղէտ չը պայթի, այն ժամանակ նահանգի գիւղացիները, այս տարվայ բերքով, որոնք ՀԱՍՎԵՑԻՆ հայ-թուրքական և այլ անկարգութիւններից, կը վերականգնեն իրանց քայքայված տնտեսութիւնը։

◆ Յունիսի 25-ի երեկոյեան ոստիկանութիւնը մտնելով «Օրապան» տպարանը, գրաւեց այնտեղ տպվող «Վտակ» թերթի միւս օրը լոյս տեսնելիք № 136-ը։

◆ Երկուշաբթի տեղի կունենայ քաղաքային դումայի վերջին նիստը։

◆ Մեզ խնդրում են յայտնել, որ Բօրչալուի գաւառի Գիւլաբարակ գիւղի ընակիչ Կամսար Ամիրխանեանցը մայիսի 25-ից անյայտացել է և այժմ յայտնի չէ թէ որտեղ է գտնվում։ Իմացողներից խնդրվում է բարի լինել տեղեկացնել Թիֆլիս, էլեքտրաքարշի ընկերութեան գրասենեակ, Թադէոս Ամիրխանեանին։

◆ Գր. Շահէն Շահնազարեան վից ատաւով «Մշակի» նուիրեց Թալին գիւղի հասարակութեան։ Ուղարկում ենք «Արաքս» կարանը։ Ուստի խնդրում ենք Թալին գիւղի հասարակութիւնից կարդարել ստանալ։

◆ Թէլաւի քաղաքային ինքնավարութիւնը միջնորդել է Թոյլատրել բանալ թէլաւում կառավարական չորդասեան պրոգիմնազիա, որի մեծ կարիք է զգացվում։ Իր կողմից քաղաքային վարչութիւնը խոստանում է հողաբաժին յատկացնել պրոգիմնազիայի համար։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

—

◆ Յունիսի 25-ին, երեկոյեան ժամը 5-ին, երբ 8 րդ ոստիկանատան պրիստաւ օգնական Ա. Ե. Նարէժնին, բարձրանալով Ստանիսլավսկի փողոցով, հասաւ մինչև Վերխնէ-Պրիուտսկի փողոցի անկիւնը, նրա վրա եռակից կրակեցին երեք անգամ։ Հէնց առաջին գնդակը, որ մտաւ աջի մէջ, Ա. Ե.-ի համար մահացու գնդակ էր։ Համարեա միաժամանակ ատ, ճանակի գնդակով վիրաւորեցին 7 րդ ոստիկանատան Թաղական վերակացուին։ բարեբաղդաբար անգնաս։ Դէպքի տեղում ոչ ոքի չը ձերբակալեցին։ Սի փարը անց՝ դատակոծով ձերբակալվեց մէնը, որի մօտ ոչ մի զէնք չը գտնվեց։

◆ Մանկավարժական վերջին նիստում, որ կայացաւ Բագուի բէալական դպրոցի մէջ, որոշվեց բարձրացնել աշակերտների ուսման վճարը 50 ռուբլուց 75 ռուբլի։ Այդպիսի մեծ գումարով ուսման վճարն աւելացնելով, բէալական դպրոցի վարչութիւնը յոյս ունի վճարել գպրոցի մօտ 60 հազար ռուբլի պարտքը։ Իսկ այս փողը ծախսվել է նոր շէնութեան վրա։

◆ Բագուի սանիտարական-բժշկական թաղական մարմինները ներկայումս ձեռնարկել են քննելու արհեստական կերպով պատրաստվող հանքային ջրերը և կվասները։

◆ Յունիսի 24-ի առաւօտեան Բագուից Վլադիկավկազ երկաթուղային գնացքով ուղարկվեցին մի խումբ քաղաքական և քրէական յանցաւորներ, որոնք պահվում էին Բագուի բանտում։ Քրէական բանտարկեալներին այժմ, նկատի առնելով որ բանտերը լի են, ուղարկում են զանազան քաղաքներ, իսկ քաղաքական յանցաւորներին ուղարկում են Արխանգէլի, Վեատկայի և այլ հիւսիսային նահանգները։ Երէկ ուղարկված 40 հոգու մէջ, ի թիւս այլոց, գտնվում էր նաև «Բակու» լրագրի աշխատակից Միքայէլեանը, որ ուղարկվում է Վեատկայի նահանգը։

(«Բ.»)

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, 24 յունիսի

Տեսնելով որ թէ Սիբիրում և թէ Սախալին կղզում, լեռներ, գերմանացիք և մինչև իսկ սիւնի և շիա աղանդին պատկանող մահմեդականներ ունէին իրանց հաւատի աղօթատներ, և այդ կրօնական մխիթարութիւնից զուրկ էին մնում միմիայն ճակատագրի դէպի աքսոր մղած հայերը, անցեալ տարվայ վերջերին, Սախալին կղզուց, լրագրի էջերում ձայն բարձրացնելով, հոգևոր կառավարչութեան ուշադրութիւնը հրաւիրեցի։

Եւ դրա արդիւնքն այն եղաւ, որ Աստրախանի թեմից նշանակվելով՝ ուղարկվեց այդ կողմերը ալէքսանդրօպոլցի Գիւլիմեան քահանան։

Վերջինիս այցելութիւնը հոգեկան մխիթարութիւնից զուրկ մնացած հայ անբաղդների վրա ազդեցիկ տպաւորութիւն թողնելու համար, չը նայելով իրանց տաժանակիր վիճակին և նիւթականից զուրկ միջոցներին, այնուամենայնիւ ցանկութիւն յայտնեցին մի աղօթատուն ունենալու և անմիջապէս սկսեցին հանգանակութեան։

Աղօթատեղի գտնելը գնելով, մօտաւորապէս 300 ռուբլի վճարեց նախկին աքսորական՝ երևանցի Կոստանդին Եսայեանցը, և քանի որ օրէնքի համաձայն թոյլ չէր տրվում աքսորվածների անունով գնել, դրա համար էլ թղթերը հաստատվեց հայր Տիւլիմեանի անունով։

Սախալինարնակ աքսորվածները իրանց արիւն քրտինքով ձեռք բերած վերջին կոպէկներից, առանց խնայելու, հանգանակեցին մի յայտնի գումար և պատրաստեցին 400-ից աւելի գերաններ, քար, կիր և այլն, և առձեռն էլ մնաց մի փոքրիկ գումար, և այդ բոլորը յանձնվեց Աստրախանի կօնսիստորիային հաստատված երէցփոխ Թադէոս Մարգարեանցին, կազմ ու կնքված հաշուեմատեաններով։

Կոստանդին Եսայեանցը (այժմ հանգ.) երբ ընտանիքով մեկնեց Սախալինից՝ Իրկուտսկ քաղաքումն ապրելու, կղզեցնակ հայեր, առանց բացառութեան, նրան ճանապարհ ձգելիս, դիմեցին նրան որպէս աղօթատան հիմնադրի և խնդրեցին, որ նա այդ շինութիւնը գլուխ բերելու համար պակաս ծախսերը վճարէ։ Կ. Եսայեանը, զինվելով իրան դիմողների առաջարկութեան, մեր՝ ամբողջիս ներկայութեամբ հրահանգեց Թադէոս Մարգարեանին, որ նա Եսայեանին պարտք եղած նշանաւոր գումարից մի հազար ռուբլի էլ յատկացնէ աղօթատան շինութիւնը աւարտելու համար։

Բացի վերոյիշեալ դրամները և շինութեան պարագաները, նոյնպէս և գտնվում են Թադէոս Մարգարեանի տրամադրութեան տակ Սախալինում մեր հիմնած ընթերցարանի համար թէ Կովկասից և թէ ուրիշ տեղերից բերել տրված բաւականին գրքեր, «Մշակ» լրագրի կազմված մի քանի տարեկանը, պ. Կարապետ Հունուզքեանի նուիրած «Աղբիւր-Տարագներ», նշանաւոր գործիչների՝ Խրիմեան Հայրիկի, հայր Ալիշանի, Դ. Արծրունու, Բաֆֆու և այլ մեծագիր պատկերներ։

Աղօթատան շինութեան մակարդակը և թոյլատրութեան պաշտօնական իրաւունքը ստանալուց քիչ ժամանակից վերջ սկսվեց ռուս-եպիսկոպոսական պատերազմը և այդ պատճառով բոլոր աքսորվածները կղզուց դուրս գալով արտօնութիւն ստացան վերադառնալ հայրենիք և կամ ուր որ կամենում են։

Ի նկատի առնելով, որ Սախ. կղզին այսուհետև աքսորավայր չէ և այնտեղ գտնվում են միայն 2—3 հայ անտատներ, այն էլ ժամանակաւոր, և բոլորովին աւելորդ է աղօթատուն կառուցանելը, և ի նկատի առնելով թիւրքահայ հեղայլներին ծով կարիքները և սովի ճիրաններին ժամանելը, ես, որպէս աղօթատան շինութեան համար Աստրախանի կօնս. և Սախալին կղզու վիճակ. Նահանգապետից հաստատված հոգաբարձու ընկերներիցս մէկը, բարոյական պարտք եմ համարում առաջին անգամ ձայն բարձրացնել լրագրում, որպէսզի թէ Աստրախ. կօնս. և թէ նրանք, որոնց սրտին մօտ է այդ կարևոր հարցը, որքան կարելի է, շուտափոյթ միջոցներ գիտեն՝ ստանալու Նոր-Բայազէտի Օրդպլու գիւղացի Թադէոս Մարգարեանից (որ նեկայումս յայտնի առատարան տուն ունի Սախալինում) կանխիկ գրամները իր անցեալ տարվանները և նրա միջոցով ծախել ապրանքները և պատրաստի իրերը, այդ գումարը յատկացնել յօգուտ թիւրքահայ կարօտեալներին։ Եւ աչքի առաջ պիտի ունենալ, որ աղօթատան գեաները քանի որ գտնվում է Սախալին կղզու Ալէքսանդրօվսկի պօստի մի յայտնի կենտրոնում և քանի որ վերացված է ամբողջայր անունը, կրկնապատիկ և մինչև իսկ եռապատիկ գնով ծախվելուն տարակոյս չը կայ երբէք։

Իսկ ինչ վերաբերում է նոյն անձնաւորութեան մասին գտնվող ընթերցարանատական գրքերին և պատկերներին, Սախալին կղզուց տեղափոխել Սիբիրի Իրկուտսկ քաղաքը, որտեղ գտնվում են բաւականաչափ հայեր և կարող են կարդալով օգտվել։

Խաչատուր Կորխմազեանց

—

Վաղարշապատ, 20 յունիսի

Վերջին ժամանակներս յաճախ պատահում ենք «Վտակում» Ն. Բ. ստորագրութեամբ Վաղարշապատից տրված առասպելական տեղեկութիւնների, որոնք իրանց անհեթեթութեամբ անպիտան ծիծաղ և գաւեշտական մեծ բաւականութիւն են պատճառում վաղարշապատցիներիս։

Ահա մի քանի նմուշ այդ տեղեկութիւններից.

ա) № 122-ում Ն. Բ., խօսելով Վաղարշապատի գողութիւնների մասին, ի միջի այլոց գրում է, որ «մայիսի 29-ի գիշերը չարագործները յարձակվում են իրանց հարևանի տան վրա ոչխար գողանալու համար. սկսվում է երկու կողմից հրացանաձգութիւն, գողերը փախչում են»։

Մայիսի 29-ի գիշերը ոչ մի գողութիւն և ոչ էլ փոխադարձ հրացանաձգութիւն տեղի չէ ունեցել. իրողութիւն այս է, որ մայրաքաղաքի Ս.-ի որդին կիրակի օրը հարբում է և երեկոյեան դէմ, օդի մէջ, մի քանի անգամ ատրճանակ է արձակում։

Նոյն թերթի միևնոյն համարում, դուրդուրուց Վաղգէնը գաղթականներին Սարդարապատի շրջանից դուրս անելու մասին խօսելով գրում է, որ Վաղարշապատից ևս մի քանի տուզերի ձեռքով դուրս են քշել գաղթականներին։ Այդպիսի բան Վաղարշապատում չէ եղել։

Ճիշտ է, Վաղարշապատից մի անհատ այդպիսի մի սխալ տեղեկութիւն է հաղորդում, սակայն զգալով իր սխալը՝ անմիջապէս հերքում է գրում, բայց չէ տրպվում, չը գիտենք ինչու. բացի դրանից «Վտակի» խմբագրութեան անդամ պ. Լ. Նազարեանը Վաղարշապատում եղած ժամանակ քննել և իմացել է այդ չուրի ստոյգ լինելը. ցաւալին այն է, որ այս բոլորից յետոյ նորից «Վտակ» թերթի էջերում երևան են գալիս նոյնանման անհեթեթ լուրեր։ «Վտակը» մի սովորութիւն ունի, որ հարցը շուտ է փակում. բայց այս հարցը ինչու՞ փակված չէ համարում։

բ) № 125-ում խօսելով Վաղարշապատում գոյութիւն ունեցող հասարակական հիմնարկութիւնների մասին՝ Ն. Բ. յատկապէս կանգ է առնում գիւղական շտեմարանի վրա, ասելով որ երէցփոխը 14 խալ. ցորեն է հաւաքում և լցնում եկեղ. սենեակները, որտեղից մկներն աւելի շատ են օգտվում, քան գիւղական չքաւորները։

Վաղարշապատը գիւղական շտեմարան չունի. երէցփոխ Ա. Օհանջանեանը էջմիածնի վանքից, իր երաշխաւորութեամբ, 14 խալ. ցորեն է վերցնում և բաժանում չքաւորներին և բոլոր պարտատէրերի մուրհակներն ունի պահած, այնպէս որ ցորենից մի հատիկ անգամ չի կորչի։

գ) Մի այլ համարում Ն. Բ. գրում է, որ Օշականում բռնել են օղու գործարան։

Բոլորովին թող հանգիստ լինի Ն. Բ., Օշականում ոչ մի օղու գործարան չէ բռնվել. այս ես իմացել եմ օշականցիներից։

դ) № 127-ում գրում է. «էջմիածնի վանքի հարկանու Յակոբ Տէր-Անտոնեանի և նրա որդի Մկրտիչ Տէր-Անտոնեանի գործը արդէն վերջացած է սինոդում, որ մեղադրեալներին արդարացրել է»...

Այս արդէն հրէշային սուտ է. հարկահան Յակոբ Տէր-Անտոնեանի արդարացուցը մասին սինոդում խօսք անգամ չէ եղել և չէր էլ կարող լինել, որովհետև նախ՝ որ նրա հարկահանութեան գործերը գեռևս քննում է Ա. Տէր-Պօղոսեանը և երկրորդ՝ որ ամենագլխաւորն է՝ Յակոբ Տէր-Անտոնեանի դրամական գեղծումների մասին փաստեր կան. թէ ուզում է իմանալ Ն. Բ., թող դիմէ Ա. Տէր-Պօղոսեանին, կամ թէ իրան պատահող վաղարշապատցուն թող հարցնէ. այն ժամանակ կը հասկանվի, որ սասնեցու ճիշտ ենս (Ն. Բ. վաղարշապատցի չէ).

Իսկ հարկահան Յակոբ-Տէր-Անտոնեանի որդի Մկրտիչը արդարացաւ սինոդում, բայց թէ ինչ միջոցով և ինչպէս, անս այս է հետաքրքրական։ Քիչինեվից էջմիածին գալուն պէս իր մի վեղարաւոր բարեկամի հետ սկսում է գործը «կարգի դնել», և մի գեղեցիկ օր, երբ էջմիածնից բացակայ է լինում սինոդի անդամ Յուսիկ վարդապետը, որը Տէր Անտոնեաններին լաւ ճանաչելով նրա արդարացումը չէր ուզում, գործը զեկուցվում է և այդպիսի վախճան է ունենում։ Սա, իսկապէս, ոչ թէ արդարանալ է, ինչպէս գրում է Ն. Բ., այլ մի տեսակ «խաթրապահութիւն». դրանով անդամները միայն իրանց «հոխան ազատեցին» Մ. Տէր-Անտոնեանի ձեռքից, որը շարունակ սրա և նրա խուզն էր ժամում։

«Մշակում» Դանձակից տպված մի ծամակի առիթով, որտեղ մի միջակէտի հարց կար, «Վտակը» ազատակ բարձրացրեց և ողջ աշխարհին իմաց արաւ. ապա ինչու է «տաղ» անում, երբ այդպիսի հրէշային սուտեր ինքն է տպում. երեի այդ էլ մի նոր տեսակի գործելակերպ է։ Ցաւելիցն դէպս սուտերով չէք կարող ընթերցող հասարակութեանը բաւականութիւն տալ։

Անցորդ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԳԱՐԵԿԱՍՏԱՆԻՑ

—

Մայմասա, 7 յունիսի

Վերջապէս... Օսմանեան զօրքը հասաւ Զէյրի-կալան (Ճարա), Մայմասայից միայն 10—15 վերստ հեռաւորութեան վրա։ 4—5 օրից ի վեր է, որ մի հարիւրապետի հրամանատարութեամբ 100 ի չափ զինուորներ բոլորովին անարգել մտան Ճարա և, որպէս թէ, հետզհետէ նուիրից կը հասնեն և նոր զօրքերը։ Ի՞նչ եղաւ, որ Ճաց նոր դաշնագրված Գարսկասանի հողի անձեռնմխելիութիւնը հետաքրքրական է իմանալ թէ յետոյ ինչ կերպ պիտի մեկնաբանվի, փաստաբանվի երկու մեծ պետութիւնների այդ հանգիստաւոր որոշումը։

Գարսկի իշխանութիւնը (այս բառը մի բիչ անտեղի է գործածել, որովհետև երկաթ ժամանակից ի վեր է, որ այստեղ կատարեալ անիշխանութիւն է տիրում) ոչ մի շարժում, գիմադրական ոչ մի քայլ չարեց և չէ էլ անում, իսկ ժողովուրդը, որ նախ քան գալը՝ ամիսներ առաջ որ խօսք կար «օսմանցիներին» գալուն, շատեր պատասխանում էին՝ «բէյլա սարբլա, բէյլա քասարբլա», այժմ ցոյց է տալիս՝ ազգայնապէս՝ անղգայութեան ամենացած տեսակի իր ինչպիսութիւնը. բոլորովին անտարբեր

է, կարծէք ոչինչ չէ պատահել... Եւ զարմանալի չէ...

Օսմանեան զօրքի անելիքի մասին, Մալմաստի վերաբերմամբ, տարաձայնութիւնները զանազան են,—ամէն տեսակ յուսահատական, չարագուշակ զրոյցների չափ ու սահման չը կայ. ասվում է, որ «պտուկը հայի գլխի վրա կոտրվելու է»։ Այսինքն, հայը տուժելու է, ուրիշ ազգականակցութիւններին ինչա կպչելու չէ օսմանցիների գլխով։ Դա էլ զարմանալի չէ. ժամանակական օսմանցու երեսից քրիստոնեայ հայը Երը, ոնտեղ, որ դարում զուլում չէ տեսել, որ ներկայ դէպքումը տուժողը դարձեալ նոյն դարեոր բազմաչարչար հայը չը լինի։ Ճարա երթևեկող քիւրդեր, Թուրքեր և հրէաները կէս-ուրախ, կէս-տխուր շեշտով, բայց յամառ կերպով հայերին ուղղում են այս տեսակ խօսքեր. «Եղբ հայեր, ձեր բանը բոլ (վատ) է, օսմանցիների տրամադրութիւնը դէպի ձեզ շատ աննպաստ է. նրանց՝ Թիւրքերի կարծիքով Մալմաստը օսմանեան իշխանութեան դէմ Թշնամութիւն մնուցանող հայ-մարդկանցով լիքն է. Մալմաստը ծառայել է որպէս բոյն ամէն տեսակի միզիր (ֆլասակար, յեղափոխական) հայերի. ամբողջ Վասպուրականի խաղաղութիւն վրդովողը Մալմաստն է եղել, և հարկաւոր է մի դաս տալ դրան» և այլն...

Ուրեմն այսուհետև էլ—պարսկի հողի վրա էլ հայի արիւնը պիտի հոսի սուլթան Աբդիւլ-Համիդի հրամանով։ Ինչու չէ։ Կարող էք ցաւել, բայց ինչու պիտի զարմանաք։ Երբ իր քաղաքակրթական առաւելութիւններով պարծեցող Եւրոպան՝ հակառակ իր կոչման՝ իր շահի համար զոհ է բերում ամէն սուրբ միտում ու զգացում, երբ նա առանց ամաչելու դեռ ուշք չէ դարձրել այն Մեծ-Մարդու՝ Գլադստոնի հանդիսաւոր խօսք-անարգանքին իր հացէին ուղղած թէ՝ «քաղաքակիրթ մարդկութեան արատ է ոճրագործ իշխանութեան գոյութիւնը» (խօսքը Թիւրքի մասին լինելով), երբ իրան քրիստոնեայ համարող գերման Քայզրը, վարագոյրի ետևից, թև ու թիկունք է Մեծ-Մարդասպանի նոր-նոր նախճիրներ գործելուն, իսկ բեմի վրա նա հակառակ չէ լինում, որ իրանից նորանոր Լէփոիներ առաջ գան հայ սպանվածների որբերին հաց-հայաւ տալու, ի փառս գերման ազգի մեծահոգութեան և գերմանական-քրիստոնէութեան, և, վերջապէս, երբ կրօնքներ կամ նորաբոյս վարդապետութիւններ փառաբանող և նրանց սրբութիւնները դատաբանող և նրանց սրբութիւնները դատաբանող գոված ամէն քաղաքակիրթ երկիրներ իրանց սահմաններից դէն չեն կարող կամ չեն ուզում տեսնել օգնութեան կարօտներ, իրանց հովանաւորութեան արժանիներ, կրկնում ենք, զարմանալի չէ, որ Մալմաստն էլ անց՝ցնի «Բարդուղիմէոսեան գիշեր»...

Ուրեմն մեզ հայերիս վիճակված է միշտ հարստահարվել, տանջվել, տառապել և մեռնել անպատիժ Ոճրագործի ձեռքով, միշտ անպատիժ մնալու ապահովութեամբ... Ուրեմն, «խաչապաշտ թագաւորները», «քնարի» քրիստոնեայ թագաւորները լուռ հանդիսատեսներ պիտի լինեն Թիւրքական թատերաբեմի վրա կատարվածներին և ընդմիշտ անտարբեր պիտի նայեն մարդկանց—մի չարաբաստիկ ազգի ատիճանաբար մեռնելուն, որոնք սակայն ապրել են ուզում մարդավարի, որոնք սակայն արժանի են ապրելու մարդավարի։

Կեցցէ սուլթան Աբդիւլ-Համիդ խան, կեցցէ քաղաքակիրթ Եւրոպան...

Վտարանդի

Յունիսի 10-ին

Ց. Գ.—Այս նամակը պատրաստ էր արդէն, երբ այսօր Ճարայից լուր ստացվեց, որ Խանասորի հերոս՝ հռչակաւոր Եէրիֆբէգը բազմաթիւ հավիդիէ ձիաւորներով մտաւ Ճարա։

Նոյն

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

—

Բերլին, 15 յունիսի

Ինչպէս առաջին նամակումս գրել էի, երէկ, գիշերվայ ժամը 10-ից 15 բսպէ անց, անցանք գերմանական սահմանը։

Այդտեղ աչքի էր ընկնում խիստ դիսցիպլինան։ Երբ կայարանից՝ ճանապարհորդական իրերը ձեռքներս՝ անցանք կայարանի միւս երեսը, լայն դռների առաջ մեր առջև կանգնած տեսանք երկու գերմանական ժանդարմներ. դրանք արտաքինով շատ մաքուր էին, հսկայ, լայնաթիկունք, բարձրահասակ և առողջ մարդիկ, ուշադրութեան արժանի պաշտօնական զգեստներով։

Նախ պահանջեցին անցագրեր, որը ներկայացնելուց յետոյ թոյլ տուին ներս անցնել։ Ներսում մի այլ պաշտօնեայ պահանջեց կալիշում գնած ռուսական երկաթուղու տոմսակը։ Այնուհետև շարքով մեզ կանգնեցրին և սկսեցին շատ քաղաքավարի կերպով մեր իրերը խուզարկել։ Գլխաւորապէս փնտռում էին ոգելից խմիչք, որը խիստ արգելված է։ Ճանապարհորդների զրպանը չեն խուզարկում։

Դէպի Բերլին անցնելու համար երբ տոմսակ պահանջեցինք, ռուսական դրամ չընդունեցին և ցոյց տուին մի այլ կասսա, ուր նստած էր ռուսական ներկայացուցիչը, որը մեզանից վերցնելով ռուսական դրամը փոխարէնը տուեց գերմանական։

Երկու տոմսակին մինչև Բերլին երրորդ կարգի համար վերցրին 25 մարկ, իւրաքանչիւրիս 12 մարկ 50 ֆեն., որ հաւասար է ռուսական մօտաւորապէս 5 ռուբլի 50 կոպէկի։

Գերմանական երկաթուղու երրորդ կարգի գնացքը աւելի մաքուր է, քան ռուսական երկրորդ կարգինը։

Այսօր, յունիսի 15-ին, առաւօտեան ժամը 5½-ին, հասանք Բերլին։

Երկաթուղու կայարանում մօտեցանք գրավճառին և սկսեցինք պօստի հազարաւոր բաց նամակներ ընտրել։ Հարիւրաւոր նկարներ կային այդ բաց-նամակների վրա, էլ պատներ, արձաններ, կայարաններ, անտառներ և այլն։ Ընկերս գրավճառից պահանջից կարլ-Մարքսի պատկերով պօստ կարտ։ Եւ որքան եղաւ մեր զարմանքը, երբ Բէբէլի հայրենիքում, Բէբէլի հայրենակիցը փոխանակ Մարքսի պատկերը տալու՝ պօստի մարկա տուեց։ Եւ երբ մենք կրկնեցինք մեր խօսքը, երկաց որ Մարքսի մասին գաղափար անգամ չունի և չը գիտէ թէ այդ պատկերով բաց նամակներ գոյութիւն ունին թէ չէ։

Մեզ ու մեզ ասացինք՝ «այ դիդի դիւնիա... Կովկասի հայերս մեր ցաւն ու դարդը թողած՝ փողոցի աղքատներին այնքան նշանակութիւն չենք տալիս, բայց Մարքսի պատկերը սեղանի զարդ ենք դարձնում... Իսկ Բերլինում Մարքսի պատկերի փոխարէն պօստային մարկա են տալիս»։

Ո՞ւմ կողմն է յաղթութիւնը։ Կովկասը լիքը մուրացկաններ են, իսկ Բերլինում մի հատ մուրացկան երկու օրվայ մէջ չը տեսանք...

Ի միջի այլ հետաքրքրական երևոյթների, տեսանք և մի այլ հետաքրքրական տիպ։ Խորհրդարանի առջևից անցնելիս, տեսանք մի սայլ, որի մի կողմը լծված էր մի շուն, իսկ միւս կողմը՝ մարդ։ Սայլը կանգնեցրինք, և ընկերս սկսեց հարց ու փորձ անել։ Շան լծակիցը պատասխանեց, որ շունը արժէ 35 մարկ և օրական իր հետ հաւասար կերպով աշխատում է 2—3 մարկ։

Բերլինի միջով անցնում է պատմական Զօնդա գետը, որի վրա երթևեկում են նաւեր, նաւակներ և շոգենաւեր. քաղաքի մէջ այդ գետը բաժանվում է մի քանի մասերի, որից օգտվում է քաղաքի ամբողջ ազգաբնակութիւնը։

Քաղաքում կենսական մթերքների կատարեալ թանգութիւն է։ Մսի ֆունտը 40 կ. ռուսական դրամով, հացը 7 կ.։ Բանջարը ստանում է օրեկան 1 ր. 60 կ.։ Որքան էլ Գերմանիան սահմանադրական պետութիւն է, ժամուլի, խօսքի, կենաց ու գոյքի ազատութիւն է տիրում, բայց և այնպէս, երբ սկսում էք խօսել նրանց հետ, երևում է Թունդ չովինիստական հոգի. կրօնասէր են ինչպէս պարսիկները, բացի իրանցից ոչ ոքի ճանաչել չեն ուզում։ Մի խօսքով գերմանացին ծնված է գերմանացու համար։

Ռուսաստանցու համար շատ դժուար է Գերմանիա ապրել կամ ճանապարհորդել։

Երևակայեցէք, առաւօտ է, սովորաբար մարդ թէյ է խմում, բայց այստեղ թէյի մասին գաղափար չունեն, խմում են սուրճ, գաբեջուր։

Ջրալի կերակուր չը կայ, բացի բուլիոնից, այն էլ ոչ ամէն հիւրանոցներում։ Երկար փնտռելուց յետոյ մի հիւրանոցում բուլիոն գտանք և ինչ տուին մեզ. մի թէյի բաժակի չափ չաշկայի մէջ մի քանի կուր բերին և մի թէյի գդալ մէջը։ Եւ երկու բաժակ ջրի համար վերցրին 2½ մարկ։

Ռուսաստանցին ճանապարհորդելիս իր հետ, բացի թէյ ու շաքարից, ռուսական սահմանից պիտի ուտելու պաշար էլ տանի, այլապէս բացի կալբասից ուրիշ կերակուր չի գտնի ճանապարհորդը։

Ս. Գարագաշ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

26 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հեռաւոր Արևելքի շրջանների կառավարութեանը վերաբերվող մինիստրների խորհրդի հրահանգների մէջ, որը և արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան, ի միջի այլոց որոշված է իրաւունք տալ ներքին գործերի մինիստրին մշակել մի քանի կանոնակէտեր Պրիմօրսկի շրջանի և Սախալին կղզու վարչական վերակազմութեան մասին, աւելացնել ոստիկանութեան պաշտօնեաների կազմը Պրիմօրսկի շրջանում և միջոցներ ձեռք առնել շուտով հեռագրաթել անցնելու Եակուտսկի և Օխոտսկի միջև, լիազօրութիւն տալ առևտրի մինիստրին հոգալ շուտափոյթ նաւային հաղորդակցութիւն հաստատելու Պետրոպաւլովսկից մինչև Նիժէկոլիմսկ։

ՀԱՐԾԱՎ։ Այսօր Պրագա մեկնեցին կօնֆերէնցիային մասնակցելու համար լեհական բէպլիստների, ժողովրդական դեմոկրատական և պրոգրեսիստների կուսակցութիւնների 6 պատգամաւորները։

ՍԱՐԱՏՕՎ։ Բիրուշկ գիւղում այրվեցին 88 գիւղացիական տներ. վնասը 40,000 է. պատճառն անյայտ է։ Ատկարակի գաւ. մեծ Բէլն գիւղում այրվեցին 60 տներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Այսօր № 41 տունը Շպալէրնի փողոցում փլվեց և տակումը արեց եօթ բանուորների, որոնցից երեքին հնար եղաւ հանել փլատակների տակից։

Պետական բանկի անդամ ի. գ. խ. Դանուին հրամայված է լինել մաքսային տուրքերի վարչութեան վերատեսուչ, մնալով իր պաշտօնում։

Պետերբուրգի առևտրական դատարանը մնանկ յայտարարեց Դօնեցկի քարածուխի հանքերի և պղնձագործարանների հիւսիսարևելեան ընկերութեանը, որի պարտքը հասնում է 3,312,998 ֆրանկ։ Ընկերութեան գլխաւոր տէրերը բելգիացիներ են։

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը բացատրել է, որ բացի տղայական հասակին յատուկ վարակիչ հիւանդութիւններից, որոնք յիշատակված են մինիստրութեան 1908 թ. փետրվարի 27-ի հրահանգի մէջ, կրթական հաստատութեան փակման պատճառ կարող են ծառայել նաև աշակերտների բծաւոր տիֆ և մենինգիտ հիւանդութիւնները։

Արտաքին

26 յունիսի

ՎԻԵՆՆԱ։ Պատգամաւորների պալատ։ Ֆինանսների մինիստր Կորիտովսկին մի օրինագիծ մացրեց շինութիւններից ստացվող հարկի բարենորոգութեան, ինչպէս և կառավարական, առանձնապէս երկաթուղային ու պօստային հաստատութիւնների ստորին ծառայողների դրութիւնը բարւոքելու համար չորս և կէս միլիոն լրացուցիչ գումար յատկացնելու մասին։ Օրինագիծը իր ոյժի մէջն է մտնելու սեպտեմբերից և ամէն տարի կը պահանջէ 18 միլիոն ծախք։

ՍՕՖԻԱ։ Բելգարական գործակալութիւնը հաղորդում է, որ այսպէս կոչված «գաղտնի փաստաթուղթը», որ հրատարակել է գերմանական լրագիրներից մինը, որ իբր այժմեան իշխանապետական կառավարութեան մակեդոնական քաղաքականութեան հիմք է ծառայել, ընաւ այն կարևոր նշանակութիւնը չունի, ինչպիսին լրագիրը աշխատում է նրան վերագրել։ Այդ փաստաթուղթը, որ ընաւ գաղտնի չէ հանդիսանում, գտնվում էր շատ անձանց ձեռքում Բելգարիայում և պարունակում է միայն իր հեղինակի հայեացքները։ Մակեդոնական քաղաքականութիւնը, որ գործադրում է իշխանապետական կառավարութիւնը, միանգամայն հակասական է փաստաթղթով առաջարկվող միջոցներին։ Լրագրի ունեցած նպատակը՝ այդ անշնչան փաստաթղթի հրատարակութեան նկատմամբ լաւ յայտնի է Սոֆիային։

ՕՏՏԷ (Նորվէգիա)։ Ժամանեց Վիլհէլմ կայսրը։

ԿԵՕՆ։ «Köl. Zeit.»-ին հեռագրում են Տանժէրից, որ Մարոկկոյի ոստիկանութեան գեներալ-տեսուչը դիպլոմատիական մարմին բողոք յայտնեց այն առիթով, որ ոստիկ. պահակախմբին Մազագանից տեղափոխեցին Ազէմուր. այդ կարգադրութեան մէջ գեներալ-տեսուչը տեսնում է Ալժէզիրասի արձանագրութիւնների խախտում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմված 1880 թ.

(Գուլիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամէն օր, բացի կիրակի օրերից
ՈՒՌՈՒՑՈՂՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վենէրական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ԶԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վենէրական., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։
ԻՐԵԳՈՆԵՐԸ՝
Ա. Ց. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վենէրական, միզասեռ և մորթու հ.

Վճարը 50 կ.։ Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ

Վանաց աւագ եկեղեցումը յուլիսի 6-ին, կիրակի օրը, ժամը 12-ին լինելու է ծխականների ժողով՝ երկու պատգամաւորներ ընտրելու, որոնք սեպտ. 15-ին առաջնորդարանումը մասնակցելու են վեց հոգաբարձունների ընտրելուն Ներսիսեան ազգային հոգևոր ուսումնարանի համար. ուստի սրանով հրաւիրում եմ պ.պ. ծխականներին, որ յիշեալ օրն և ժամին շտապեն եկեղեցի ընտրութեանը մասնակցելու։

Դործակալ ա. ս. Թիֆ.

Գրիգոր ա. ք. Մանդակունի

(29, յուլ. 4, 6) 3—1

ՂԱԶԱՐՈՍ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ

(Զաւախեցին)

որ աւարտել է Ներսիսեան դպրոցն, ունի տասնչորս տարվայ ուսուցչական փորձառութիւն և վերջին տարիներս վարում էր Մոզդոկի հայոց դպրոցների տեսչի պաշտօնը,

Տեղ է որոնում հայոց դպրոցներում

Հասցէն՝ ր. Ахалкалаки (Тиф. губ.), Лазарю Теръ-Григорянъ.

(Ե. շ.) 4—1

ՀՐԱՒԷՐ

Վաղը, ամսոյս 29-ին, ժամը 12-ին, Վերայի ս. Խաչ եկեղեցու ծխականները երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են նոյն եկեղեցին մասնակցելու նոր երէցփոխանի ընտրութեանը։

Գործակալ

Գրիգոր ա.-ք. Մանդակունի

(շ.) 1—1

ՀՐԱՒԷՐ

Հին-Նախիջևանի հայոց ծխական երկսեռ «Վարդանանց» դպրոցի հոգաբարձութիւնը սրանով հրաւիրում է նոյն ուսումնարանի համար ուսուցիչներ, որոնցից մէկը աւագ, ուսուցչուհիներ (որոնց մէկը կունենայ և ձեռագործի դասեր)։ Ցանկացողները կարող են ներկայացնել հոգաբարձութեանը կրթական և ուսուցչական ցենզերը՝ պայմաններով։

(Ե. շ.) 2—1

Պատանեաց Դպրեվանքի իսկական պետական ջրեր

Մ. ԼԱԳԻՋԵԻ ԵՒ ԸՆԿ.

կատարելագործված գործարանի
Հոսք եւ անուշահոտութիւնը գերազանց

Գործարանին կից դէկօրատիվ բուսականութեամբ գեղեցիկ զարդարված տէրրասա, ուր կարելի է խմել սառուցի նման սառը ջուր։ Գործարանը գտնվում է Գօլովինսկի պրոսպէկտի վրա, Մանթաշեանի տանը։

Տելէֆօն գործարանի № 411։

(Հ. կ.) 10—4

Մամուլի տակից դուրս եկաւ

Սահակ ա.-ք. Սահակեանի

ՀԻՆ-ՈՒԽՏԻ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

հրատարակութիւնը։

—

Իմ բոլոր դասագրերի պահեստը գտնվում է Գր. Մեսսնիկեանի մոտ։ Ցանկացողները կարող են դիմել՝ Тифлисъ, Дворцовая, магазинъ Григ. Ст. Мясникова.

Սահակ ա.-ք. Սահակեան

(Հ. հ. շ.) 10—6

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

1) Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն։ Գինը 8 ր., կազմով 8 ր. 60 կ., 9 ր., 9 ր. 50 կ., 10 ր. և աւել, նայած կազմին։ Ճանապարհածախսը (մոտ 1 ր.) հեղինակի վրա։

2) Լիակատար բառարան հայերէնից ռուսերէն։ Բաժանորդագինը 5 ր., առաջին բառ. գնողների համար 4 ր.։ Լոյս են տեսել առաջին երկու պրակները։ Բառարանիս մնացած մասը լոյս պիտի տեսնէ մի գրքով։ Այսուհետև բաժանորդ գրվել միմիայն հեղինակի և Համբ. ուարկաւագ Քարիմեանցի մոտ։

3) Դրպանի բառարան ռուսերէնից հայերէն։ Բաժանորդագինը 2 ր. 50 կ.։

4) Ռուսերէն այբբենարան եւ առաջին ընթերցարան, գինը 25 կ.։

Բառարաններից 10 օր. աւել գնողներին զգալի զեղչ։

Դիմել անխտիր. Тифлисъ, архидіакону Амбарцуму Каримянцу (Армянская семинарія) և կամ իրան հեղինակին այս հասցէով. С. Петербургъ, А. Дагбашяну (до востребованія)։ Երբէք չը դիմել ոչ Մասոն Յարութիւնեանին (Բագու) և ոչ եղբ. Թառայեանների գրավաճառանոցին։

(17, 28) 2—2

Հրատարակութիւն Գ. Գալստեանի
№ 27 և № 28
ՀԱՅԿԱՆ
ՎԱՅԵԼԶԱԳՐՈՒԹԻՒՆ
եւ
ԳԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ
Դպրոցների եւ ընտանիքների համար
Կազմեց Գարեգին Լեոնեան
Հիմնադիր-Տեսուչ Թիֆլիսի Գեղարուեստական Կուրսերի
Տետրակ Ա.
(Տարրական դասընթաց)
ՊԱՐԶ ԳՐՈՒԹԻՒՆ
—
Տետրակ Բ.
ՊԱՐԶ ՎԱՅԵԼՈՒԶ ԳՐՈՒԹԻՒՆ
Մամուլի տակ է, շուտով լոյս կը տեսնի
Տետրակ Գ.-ը
Դիմել՝ Тифлисъ, книжный магазинъ „Гутенбергъ“ Г. И. Галустяну.

(Ե. շ.) 2—2

Նոր հիւրանոց Վարշավայում
„ՀԻՒՐԱՆՈՑ ՊԱՍՍԱԺ“

որ գտնվում է Վարշավայի առևտրական կենտրոնում, Բիլեանսկայում, Գոլգայա եւ Նալիվօկի փողոցների անկիւնում, «Զիմնոսի Պասսաժի» շինութեան մէջ, էլեքտրական տրամվայների կանգ առնելու տեղը, պարունակում է 100 նոր սարքված սենեակներ՝ արժողութեամբ 1 ր. 25 կ.-ից օրական, էլեքտրական լուսաւորութեամբ և կենտրոնից տաքացնելով։ Լողարաններ, էլեքտրական բարձրացնելու մեքենայ թէ մարդկանց և թէ ապրանքների համար, ապրանք դարսելու հնարաւորութիւն, քաղաքային տելեֆոններ և միացումն Լօձի և Կալիշի հետ, կառքեր հիւրանոցից դէպի ամէն գրնացքներ։

Բացվում է յունիսի 7/20-ից։

(շ.) 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԷԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ երկրորդ աճուրդը այն կալուածքների, որոնք չը ծախվեցին առաջին աճուրդի ժամանակ, որ տեղի ունեցաւ յունիսի 25-ին և 26-ին, կը կատարվի չորեքշաբթի, ներկայ տարվայ յուլիսի 2-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Ընկերութեան շինութեան մէջ, Պուշկինսկայա փողոցի վրա։ Բոլոր տեղեկութիւնները ծախվող կալուածքների մասին կարելի է ստանալ Ընկերութեան Դիւանատան մէջ, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 2 ը։

(շ. հ.) 2—1

ԱԼՄԵԶԱ

Գրաս. № 3475 Դեկտեմբեր 1. Դեկտ. 14. Դեկտ. 27. Յունվար 10. Փետրվար 24. Մարտ 9.

Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Ախօրաձէն է։ Գլխաւոր պահեստ և գրասենեակ «Ալմեզա»-ի

Тифлисъ, Пушкинская ул. № 15.

Փոքրնիկ. սրուակը 40 կ.

Գրաս. և պահեստի բաժանմ. Баку, Старо-Полицейская, № 14. Тифлисъ, Ахобадзе.

(Հ շ.)

ԱՏԱՄԻ ՅԱՒԸ

ՇՈՒՏ հանգստացնելու
եւ ատամն ու լնդերը ամրացնելու
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆ Է

ԱԼՄԵԶԱ

ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ցուցահանդէսներում նուէրների է արժանացել
ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ԶՐԻ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Այդպիսիներին խնդրում ենք դիմել
Ախօրաձէի գրասենեակը,
Пушкинская, 15.

Օտարահաղորդիցներից կանխավճար ստացող ուղարկում ենք վերադիր վճարով։

Դեղատներին զեղչ

Իսկական սրուակը 1 ր. 20 կ.

Գրասենեակ՝ Բաքու, Старо-Полицейская, № 14. Հեռագիրների հասցէ՝ Тифлисъ, Ахобадзе. 15—14

Типографія „Экономія“ Ав. Мугдусіаконова съ С-ми. Большая Ванкская ул. № 3.